## II. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ

| ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ | ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐ |
|---|---|
| **1. Կանխիկ միջոցների մուտքագրում** | |
| ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո | 0 |
| բ/ Այլ արտարժույթ,այդ թվում քարտային հաշիվներին մուտքագրում | օրվա սահմանված տոկոսադրույքով |
| գ/ չեկերի գնման, վճարահաշվարկային համակարգերով, ավանդային հաշիվներին մուտքերի, ինչպես նաև արտարժույթի կանխիկ առք ու վաճառքի գործարքների նպատակով | 0 |
| դ/ Հաճախորդների կողմից հատուկ ընթացակարգով /համարակալված կապարակնիքներով կնքված կամ մեկանգամյա օգտագործման համարակալված պոլիէթիլենային պարկերով/ կանխիկ գումարների մուտքագրում ելնելով գումարի ծավալից | 0,01% min 500 դրամ |
| **2. Հաճախորդի հաշվին մուտքագրված կանխիկ միջոցներից՝ կանխիկի վճարում**[1] | |
| ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո | 0 |
| բ/ Այլ արտարժույթ | օրվա սահմանված տոկոսադրույքով |
| **3.Կանխիկ միջոցների վճարում՝ հաճախորդի անկանխիկ միջոցներից**[2] | |
| ա/ մինչև 30 000 դրամ | 500 դրամ |
| բ/ 30 001 դրամ և ավելի | 0.5%, min 1 000 դրամ |
| գ/ ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ | 0.5%, min 1 000 դրամ |
| դ/ Այլ արտարժույթ | օրվա սահմանված տոկոսադրույքով |
| **3.1 Ոչ հաշվետեր հանդիսացող անձանց համար և տարանցիկ հաշիվներից** | |
| ա/ մինչև 30 000 դրամ (համարժեք ԱՄՆ դոլար կամ եվրո) | 500 դրամ |
| բ/ 30 001-100 000 դրամ (համարժեք ԱՄՆ դոլար կամ եվրո) | 1000 դրամ |
| գ/100 001 դրամ (համարժեք ԱՄՆ դոլար կամ եվրո) և ավել | 1%, min 3000 դրամ |
| **4.Հնամաշ և վնասված դրամանիշերի փոխանակում** | |
| ա/ ՀՀ դրամ | 0 |
| բ/ ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլի | 5% |
| գ/ Այլ արտարժույթ | չի ընդունվում |
| **5. Կանխիկ արտարժույթի իսկության ստուգում *** [3] | |
| ա/ մինչև 600 000 դրամին համարժեք արտարժույթ | 5 000 դրամ |
| բ/ 600 001-ից 1 000 000 դրամին համարժեք արտարժույթ | 10 000 դրամ |
| գ/ 1 000 001-ից 5 000 000 դրամին համարժեք արտարժույթ | 15 000 դրամ |
| դ/ 5 000 001-ից 10 000 000 դրամին համարժեք արտարժույթ | 20 000 դրամ |
| ե/ 10 000 001 դրամին համարժեք արտարժույթ և ավելի | 30 000 դրամ |
| **6. Մետաղադրամների ընդունում մեկ հաճախորդից՝ մեկ բանկային օրվա ընթացքում** [4] | |
| ա/ մինչև 50 000 դրամ | 0 |
| բ/ 50 001 և ավելի դրամ | 2% |

* Սակագինը ներառում է ԱԱՀ-ն

1 Հաճախորդների հաշիվներից միջոցների կանխիկացման միջնորդավճարը հաշվարկելիս հիմք է ընդունվում միջոցների կանխիկացման օրվան նախորդող 182 օրվա ընթացքում հաճախորդի հաշվին <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ համակարգում կանխիկ մուտքագրված և կանխիկ ելքագրված գումարների հանրագումարների տարբերությունը (սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների վրա): Բանկի կողմից տրամադրված վարկերը (բացառությամբ ֆիզիկական անձանց տրամադրված ոսկյա իրերի և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, **ինչպես նաև բանկի աշխատակիցներին ՀՀ դրամով տրամադրված վարկերի**, Արարատինկասացիայի աշխատակիցներին աշխատավարձից մարման պայմանով տրամադրված վարկերի, որոնց համար կանխիկացման սակագին չի գանձվում) ,**տերմինալների միջոցով հաշիվներին մուտքագրված միջոցները** համարվում են հաճախորդի հաշվին մուտքագրված անկանխիկ միջոցներ:

2 ա/ Սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, բանկային ցպահանջ ավանդային հաշիվներին վճարված տոկոսագումարների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսների, ֆիզիկական անձանց տրամադրված ոսկյա իրերի գրավադրմամբ և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, **բանկի աշխատակիցներին ՀՀ դրամով տրամադրված վարկերի** և Արարատինկասացիայի աշխատակիցներին աշխատավարձի ապահովմամբ տրամադրված վարկերի, ինչպես նաև «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տեղադրված POS տերմինալներով իրականացված գործարքներից առաջացած անկախիկ միջոցների կանխիկացման վրա:
բ/ սույն սակագինը չի տարածվում իրավաբանական անձ հանդիսացող հաճադորդների կողմից բանկի համապատասխան բազայի միջոցով տվյալ օրվա ընթացքում վճարված կոմունալ վճարների նպատակով կանխիկացվող գումարների վրա:
գ/ Բարեգործական կազմակերպությունների համար անվճար:Սույն սակագինը չի տարածվում այլ արտարժույթի վրա:
դ/ Սույն սակագինը չի տարածվում սոցիալական փաթեթի հաշիվներից և **պետ.նպաստի հաշիվներին որպես նպաստ փոխանցված գումարների կանխիկացման վրա:**
ե/Այն վարկատեսակների համար,որոնց տրամադրման ժամանակ նախատեսված է կանխիկացման սակագին, նվազագույն 1000 ՀՀ դրամի շեմը չկիրառել :

3 Սույն սակագինը չի տարածվում բանկում արտարժույթով որևէ գործարքի կատարման վրա: Քաղաքացու կողմից ներկայացված կանխիկ արտարժույթի իսկությունը ստուգվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ գանձապահի կողմից, սահմանված կարգով փաթեթավորվում, դրոշմվում և վերադարձվում հաճախորդին:

4 Սահմանված միջնորդավճարը չի տարածվում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներ ունեցող հաճախորդների վրա և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում գործող հաշիվներին մուտքագրման ժամանակ: